ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 35-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

09 փետրվար 2012թ.

ՔԱՂ. ՍՈՂՈՄՈՆ ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. հունվարի 9-ի թիվ 1 որոշմամբ 2012թ. փետրվարի 9-ին աճուրդի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 1200.0քմ հողամաս /Լոտ-54(ՔՀ-11), Կալինինի փողոց IV նրբ. թիվ 39/1 /, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, 3000000 դրամ մեկնարկային գնով:
Կայացած աճուրդում 3600000 դրամ առավելագույն գնով հաղթեց Մարտունու Ծովինար 2-րդ թղմ. 6-րդ փողոց թիվ 17 հասցեի բնակիչ Սողոմոն Ներսեսյանը, որի մասին աճուրդային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 1 արձանագրությունը:
Նշված հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հող, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման իններորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ այլ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67, 68 և 70 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերի» Կալինինի փողոց IV նրբ. թիվ 39/1 հասցեի 1200.0քմ մակերեսով հողամասը, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, օտարել Մարտունու Ծովինար 2-րդ թղմ. 6-րդ փողոց թիվ 17 հասցեի բնակիչ Սողոմոն Ներսեսյանին:
2. Կնքել հողի առքուվաճառքի պայմանագիրը, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ

պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Սողոմոն Ներսեսյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել ածուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 3600000 դրամ, ընդ որում ածուրդի անցկացման օրը մուծված 150000 դրամ նախավճարը ներառվում է հողի օտարման գնի մեջ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 36-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

09 փետրվար 2012թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997Թ, ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Սվետլանա Քյարամի Ստեփանյանը խնդրելով Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի փետրվարի 24-ի թիվ 10 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ «Սվետլանա Քյարամի Մանուկյանի» փոխարեն գրել «Սվետլանա Քյարամի Ստեփանյան»:
ՈՒսումնասիրությունից պարզվել է, որ Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի փետրվարի 24-ի «Օրջոնոկիձե փողոցի 65 շենքի թիվ 36 բնակարանի վարձակալ Ս.Ք. Մանուկյանի դիմումի մասին » թիվ 10 որոշման մեջ Սվետլանա Քյարամի Ստեփանյանի ազգանունը թյուրիմացաբար գրվել է «Մանուկյան»:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի փետրվարի 24-ի թիվ 10 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ «Սվետլանա Քյարամի Մանուկյանի» փոխարեն կարդալ «Սվետլանա Քյարամի Ստեփանյան»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 37-Ա

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

09 փետրվար 2012թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ, ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԵՐԻ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գործող մի շարք անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք հայտ են ներկայացրել քաղաքապետարան՝ իրենց սեփական ձեռնարկատիրական օբյեկտներում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, ոգելից խմիչքներ և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ սահմանված կարգը և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի գ) և ժ) ենթակետերի , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ կետերի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Բավարարել հայտերը և տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն 01 հունվարի 2012թ-ից մինչև 31 դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար

-«Վիկ Արմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
-«Աբգար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
-«Տիկ» արտադրական կոոպերատիվ
-«Սուրեն Աղաջանյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
-Գավրիել Վաթինյան ԱՁ

-Անտոն Միքայելյան ԱՁ
-Արտակ Նազինյան ԱՁ
-Ծովինար Եսայան ԱՁ
-Նարինե Դանիելյան ԱՁ
-Անուշ Ղուկասյան ԱՁ
-Գենյա Ղազարյան ԱՁ
-Ալեքսան Ղազարյան ԱՁ
-Արամ Թամրազյան ԱՁ
-Ռիտա Թամրազյան ԱՁ
-Յուրա Ղազարյան ԱՁ
-Սուսաննա Սարգսյան ԱՁ

2.<<Ա-Տեզ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների և հեղուկացված գազերի վաճառքի թույլտվություն 01 հունվարի 2012թ.-31դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար

3. Հանձնարարել

քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին.
տուրքի գանձումները կատարել յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ Դիլիջանի համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշմամբ հաստատված դրույքաչափերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 38

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

09 փետրվար 2012թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 2627.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 6 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ 1487.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող ,Բնակավայրերի հողերից. 2627.0քմ ընդհանուր մակերեսով թվով 6 հողամասերը աճուրդի և 1487.0 քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու վերաբերյալ՝ կից աղուսյակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 13-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2627.0քմ ընդհանուր մակերեսով թվով 6 հողամասերը աճուրդի և 1487.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու և դրանց մեկնարկային գները հաստատելու մասին հարցը ներկայացնել Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Աղյուսակ.

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի աճուրդ-վաճառք

Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Մեկնարկային գին	Սահմանափակումներ
1	Լոտ 1/ՔՀ-12/	Կալինինի 4-րդ նրբ. 49/2	076-032	997.0	Բնակավայրերի հող	այլ հողեր	անհատական բնակելի տան կառուցման	2,492,500	չկան
2	Լոտ 2/ՔՀ-12/	Մոլդովական 15/1	654-012	200.0	Բնակավայրերի հող	այլ հողեր	անհատական բնակելի տան կառուցման	500,000	չկան
3	Լոտ 3/ՔՀ-12/	Այգեստան 2/3	053-404	24.0	Բնակավայրերի հող	այլ հողեր	առևտրի տաղավարի կառուցման	60,000	չկան
4	Լոտ 4/ՔՀ-12/	Այգեստան 2/4	053-405	32.0	Բնակավայրերի հող	այլ հողեր	առևտրի տաղավարի կառուցման	80,000	չկան
5	Լոտ 5/ՔՀ-12/	Սարալանջի 1-ին նրբ. 14	053-347	500.0	Բնակավայրերի հող	այլ հողեր	անհատական բնակելի տան կառուցման	1,250,000	չկան
6	Լոտ 6/ՔՀ-12/	Սարալանջի 6-րդ նրբ. 4	053-407	874.0	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	անհատական բնակելի տան կառուցման	2,185,000	չկան
7	Լոտ 231/ՔՀ-10/ կրկնաճուրդ	Սարալանջի 37	053-364	626.0	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	անհատական բնակելի տան կառուցման	1,565,000	չկան
8	Լոտ 98/ՔՀ-09/ կրկնաճուրդ	Տիգրան Պետրոսյան 2-րդ նրբ. 21	040-239	861.0	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	անհատական բնակելի տան կառուցման	2,152,500	չկան

Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար *Ա. Մարտիրոսյան*